

Н. В. АРУТЮНЯН. Корпус урартских клинообразных надписей, Ереван, изд. "Гитутюн" НАН РА, 2001, 542 с., 183 таблиц.

Ն. Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ. Դիվան ուրարտական սեպագիր արձանագրությունների. Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2001, 542 էջ, 183 աղյուսակ:

Համաշխարհային ուրարտագիտության մեջ ծանրակշիռ վաստակ ունեցող ականավոր ուրարտագետ Ն. Վ. Հարությունյանի կոթողային այս աշխատության լույս ընծայումը հաճելի անակնկալ էր: Նրա բազում աշխատությունները ուրարտական նոր տեքստերի առանձին հրատարակությունները բանասիրական մեկնաբանություններով, Ուրարտուի քաղաքական պատմությանն ու պատմական աշխարհագրությանը նվիրված մեծագրությունները և ուրարտագիտական բազմաթիվ այլ աշխատությունները վաղուց են արժանացել ուրարտագետների և հարակից ճյուղերի մասնագետների ուշագրությունը:

Արդեն անցյալ հարյուրամյակի 60-ական թվականներին լայն ճանաչում գտած Գ. Ա. Մելիքիշվիլու (1953-1954, 1960, 1971 թթ.) և Ֆ. Վ. Քյոնիգի (1955, 1957) ուրարտական սեպագիր տեքստերի Դիվանները, ինչպես հայտնի է, վիթխարի դեր են խաղացել ուրարտագիտության հետագա զարգացման գործում: Դրանք միաժամանակ ուրարտական արձանագրությունների դիվանների հետագա ստեղծողների համար ընդօրինակման լավ նյութ են դարձել: Ըստ որում, բազում նորագույն արձանագրությունների հրատարակություններից հետո՝ Ի. Մ. Դյակոնովի, Բ. Բ. Պիտրովսկու, իր իսկ Ն. Վ. Հարությունյանի, Մ. Սալվինիի, Գ. Վիլհելմի և մի շարք այլ հեղինակների կողմից, ուրարտական սեպագիր արձանագրությունների նոր Դիվանի ստեղծման անհրաժեշտությունը միանգամայն ակնհայտ էր:

Ն. Վ. Հարությունյանի կողմից կազմված ուրարտական սեպագիր արձանագրությունների Դիվանում (այսուհետև՝ КУКН) ընդգրկված են ուրարտական բոլոր

արձանագրությունները, որոնք հրատարակվել են մինչև դրա լույս ընծայումը: Դրանց թիվը հասնում է 600-ի՝ 599 հիմնական, ինչպես նաև մի քանի նորագույն արձանագրություններ (ինչպես հայտնի է, Գ. Ա. Մելիքիշվիլին 1960 թ. հրատարակել է 449 արձանագրություն «Ուրարտական սեպագիր արձանագրություններ» (այսուհետև՝ УКН) ժողովածուում և մի քանի տասնյակ ուրարտական տեքստեր 1971 թ. ВДМ-ի էջերում):

Գրախոսվող Դիվանի տեքստերի հրատարակության ժամանակ Ն. Վ. Հարությունյանը հաշվի է առել իր նախորդների՝ ուրարտական տեքստերի հրատարակիչների, ինչպես նաև առանձին նոր արձանագրություններ հրատարակած հեղինակների հարուստ ավանգույթները: Հեղինակի կողմից ճշգրտվել են բազմաթիվ սխալներ, որոնք տեղ են գտել նախկին հրատարակություններում՝ ուրարտական տեքստերի ընթերցման ժամանակ, վերականգնվել են տուժած հատվածները և առաջարկվել նախկինում հայտնի արձանագրությունների նոր ընթերցումներ ու մեկնաբանություններ: Դիվանը, բառիս բուն իմաստով, պատրաստված է ուրարտագիտության ժամանակակից զարգացման մակարդակով:

Դիվանում տեքստերը ներկայացված են գիտական տառադարձումներով և թարգմանություններով (որոնցում պահպանվում են տառադարձումների տողերը): Դրանում տեղ են գտել դետերմինատիվները, գաղափարադրերը (չումբրոգրամները և ակկադոգրամները), ուրարտերեն լեզվի բառապաշարը, անձնանունները և դիցանունները, աշխարհագրական և էթնիկական անվանումները: Ժիշտ է, Դիվանում բացակայում է ուրարտերեն լեզվի առանձին քերա-

կանական ակնարկը (այդպիսի ակնարկ պարունակում է YKH-ը, որը հետագայում թարգմանվել է գերմաներեն և հրատարակվել Մյունխենում): Սակայն յուրաքանչյուր ուրարտական տեքստում լեզվի քերականական հարցերը դիտարկված են բավական հանգամանորեն (դժբախտաբար, գրքում բացակայում է ուրարտական սեպագիր նշանների ցուցակը): Դիվանի վերջում տրված են արձանագրությունների յուսակարչական վերարտադրությունները և ձևագիր ընդօրինակումների պատճենները, ինչպես նաև աղյուսակների ու հապավումների ցանկերը, կցված է Ուրարտուի սխեմատիկ քարտեզը:

Արձանագրությունները Դիվանում տեղադրված են ըստ ուրարտական թագավորների կառավարման ժամանակագրական հերթականության: Նրանցից առաջինը եղել է Սարգուրին, Լուտիսյրիի որդին (Սարգուրի I-ը): Նրա անունից կազմվել են բովանդակություններ նույնական վեց տեքստ՝ ակկադերեն լեզվով (1-6), քանի որ ուրարտական սեպագիրը ստեղծվել է, ինչպես ենթադրում է Ն. Վ. Հարությունյանը, մի փոքր ավելի ուշ (էջ 9): Այդ տեքստերը հետաքրքիր են այն տեսանկյունից, որ դրանցում նախին գործածվում է որպես հոմանիշ Ուրարտուի և Բիայնիլիի, այսինքն՝ ասորեստանյան սեպագիր աղբյուրների նախնի և Ուրարտուն նույնական են ուրարտական արձանագրությունների Բիայնիլիին: Այնուհետև բերված են իշպուլիլիի, Սարգուրի I-ի որդու (7-29) արձանագրությունները, որոնցից ինը հայտնաբերվել և հրատարակվել են Գ. Ա. Մելիքիշվիլիի YKH-ից հետո: Դրանց մեծ մասը մեկ կամ երկտողանի է և համարյա բոլորը շինարարական բնույթ ունեն:

Իշպուլիլիի և Մենուայի 13 արձանագրություններից չորսը հայտնաբերվել են 1975-1999 թթ., տեքստերի թիվն աճել է Գ. Ա. Մելիքիշվիլու YKH-ից հետո հրատարակված արձանագրությունների հաշվին: Դրանք շուրջ 30 են: Հետևաբար, Մենուայի անունը նշող արձանագրությունների ընդհանուր թիվն այժմ գերազանցում է 150-ը: Դրանցից երբեմն միևնույն տեքստը կրկն-

վում է երկակի, եռակի, քառակի, իսկ որոշ տեքստեր մեկ տողանի են:

Մենուայի որդի, Արգիշտի I-ի անվամբ նոր արձանագրությունները բավական սակավ են (174c, 184, 192): Սակայն գրանցում պատմվում է նոր ջրանցքի անցկացման, տաճարի կառուցման, ռազմական արշավանքների և երկրների հպատակեցման (մասնավորապես Տարիունիի և Դիաուխիի), բազում մարդկանց գերեվարման, ամրոցների, բնակատեղիների ավերման մասին և այլն: Արգիշտի I-ի արձանագրությունների ընդհանուր թիվը հասնում է 70-ի (173-240):

Արգիշտիի որդու՝ Սարգուրի II թագավորի արձանագրություններից (241-386) հետո, որոնցից նորերն ընդամենը մի քանի, բովանդակությամբ աննշան, տեքստեր են (246, 278, 290, 385a,b,c, 386), KYKH-ում դիտարկվում են Սարգուրի II-ի որդու՝ Ռուսա I-ի արձանագրությունները (387-405): Դրանցից երեք տեքստ, որոնք հրատարակվել են Մ. Սալվինիի կողմից 1977 և 1979 թթ., №№ 392, 393 և 394 արձանագրությունները, դժվար է թարգմանել, որովհետև շատ են անհասկանալի բառերը, այդ իսկ պատճառով Ն. Վ. Հարությունյանը բավարարվում է դրանց բովանդակությունը մանրամասն վերապատմելով:

Արգիշտի II-ի, Ռուսա I-ի որդու, արձանագրությունները մեծաքանակ չեն: Դրանք ընդամենը վեցն են (406-411): Դրանցից հարկավոր է նշել №411 տեքստը, այսինքն՝ Սիսիանում հայտնաբերված արձանագրությունը, որը Ն. Վ. Հարությունյանը ժամանակին հրատարակել է հայերեն, ռուսերեն և ֆրանսերեն լեզուներով: Ինչ վերաբերում է №407 տեքստին, ապա նոր Դիվանի հեղինակը մատուցել է այն սոսկ գիտական տառադարձմամբ (թարգմանություն առթիվ տե՛ս №406 նույնական տեքստը): Իսկ KYKH-ում №277a-ի տակ եղծված տեքստը, որը Գ. Ա. Մելիքիշվիլին պայմանականորեն վերադրել է Արգիշտի II-ին, KYKH-ում Ն. Վ. Հարությունյանը դասում է Ռուսա II-ի արձանագրությունների շարքը:

Ռուսա II-ի, Արգիշտի II-ի որդու, արձանագրությունները, YKH-ի համեմատությամբ

յամբ (9), KYKH-ում 21-ով ավելի են (412-427): №№ 412a,b, 420a,b և 427a արձանագրությունները հրատարակվել են 1979-1995 թթ., այդ պատճառով դրանք բացակայում են YKH-ում:

Շարունակության մեջ հետևում են Սարգուրի III-ի (426-429), Սարգուրի IV-ի (430-432), էրիմենայի (433) արձանագրությունները: Սրանց մի մասը եղծված է: Իսկ Ռուսա III-ի արձանագրությունները (434-444) գետեղված են բրոնզե վազանների և բրոնզե այլ առարկաների վրա, որի հետևանքով ծավալուն չեն, որպես կանոն, մեկ կամ երեք տողանի: Այդ բոլոր արձանագրությունները նվիրատվական բնույթ ունեն (հասցեագրված են իսպառի աստծուն): Ուրարտական վերջին թագավորի՝ Ռուսա IV-ի երկու արձանագրություններից մեկն էլ (№ 446) ուղղորդության արժանի է իր, այսպես կոչված, «բառանջատիչ» նշաններով:

Դիվանի եզրափակիչ մասում բերված են անհայտ պատկանելության արձանագրությունները (447-599): Սրանցից շատերը խիստ եղծված են, ուստի թարգմանության ենթակա չեն, իսկ մյուսները բաղկացած են առանձին անհասկանալի բառերից: № 520 տեքստը լավ է ընթերցվում, այնինչ ծայր աստիճանի բարձր է բովանդակության բացահայտման համար, քանի որ յուրահատուկ բառապաշար է պարունակում: № 529-543 արձանագրությունները տարողության սեպագիր նշաններ են № 25 գինու մառանի կարասների վրա: № 549-583 արձանագրությունները նույնպես տարողության սեպագիր նշաններ են ուրարտական ամրոցների այլ մառանների դինու կարասների վրա (Հմմտ. նաև № 584-597 արձանագրությունները):

Այսպիսով, գրախոսվող Դիվանն իր մեջ պարունակում է մինչ այժմ հայտնի բոլոր սեպագիր արձանագրությունները, որոնք կազմվել են ուրարտական բոլոր թագավորների կողմից (անհրաժեշտ է նշել, որ Գ. Ա. Մելիքիչվիլու ուրարտական գիվանի ստեղծման պահին դեռևս հայտնաբերված չեն եղել Սարգուրի III-ի, Սարգուրի IV-ի, էրիմենայի և Ռուսա IV-ի արձանագրությունները):

Գ. Ա. Մելիքիչվիլու և Ֆ. Վ. Քյոնիգի գիվանների հրատարակությունից հետո հայտնաբերված ուրարտական արձանագրությունները բավական շատ նորություններ են պարունակում ուրարտագիտության հետազա զարգացման համար: Ինչպես ցույց է տալիս Ն. Վ. Հարությունյանի KYKH գիվանը, այդ տեքստերում բացահայտվել են նոր դետերմինատիվներ (որոշիչներ) և գաղափարաբան (ըստ որում դրանց հին ընթերցումները փոխարինված են նորերով), ուրարտերենի բառապաշարը հարստացել է նոր բառերով, բացահայտվել են նոր հատուկ անուններ (անձնանուններ և դիցանուններ), հայտնի են դարձել աշխարհագրական և էթնիկական նոր անվանումներ և այլն:

Նոր դետերմինատիվներից անհրաժեշտ է նշել հետևյալները. AB – «ծով», «լիճ», որն անցյալում ուղղորդության չի արժանացել, սրանով օժտված է ուրարտերեն sue նույնիմաստ բառը «Մհերի դուռն» արձանագրության մեջ. didli – հազվադեպ հանդիպող դետերմինատիվ՝ հոգնակի թիվը արտահայտելու համար (Հմմտ. խեթերենի DIDLI.HI.A նույնիմաստ դետերմինատիվը). KI – «հող»՝ տեղանունները արտահայտող դետերմինատիվ (ինչպես նաև այդ գաղափարագրի qūra հնչյունական ընթերցումը). ŠAM – «բույս», բուսանուններին հղված դետերմինատիվը. UZU – «միս»՝ husu ռառին հղված դետերմինատիվը և այլն:

Նոր գաղափարագրերը հնարավորին չափ ներկայացված են ասորեստանյան և ուրարտական համապատասխանություններով. A – ասորեստ. aplū (māru) «որդի». Ā – ասորեստ. «կողմ» (ամենայն հավանականությամբ ուրարտ. bidi). AK – ասորեստ. epešu «անել». ^dAMAR.UTU – ^dMarduk. ^{LU}A.NIN երկակի գաղափարագիր՝ սեպագիր այլ սխտեմներին անհայտ «թագուհու որդի», «օրինական դահաժառանգ». DU – ասորեստ. alaku «գնալ», ուրարտ. nun(a). E.GIR – ասորեստ. (w)arka «այնուհետև» (հաճախ հանդիպում է խեթական տեքստերում). E.PAP – «առու», ուրարտ. isi. ^{LU}GABA.RI (?) – ասորեստ. gabaru «հակառակորդ». GAL – ասորեստ. basū «լինել». GAR/GA – ասորեստ. sakānu «դնել», «հաս-

տատել», ուրարտ. *ter(u)*. ^{NA}GASAN – ասորեստ. *bēltu* «տիրուհի», *šarratu* «թագուհի». GIR – ասորեստ. *harrānu* «ճանապարհ», ուրարտ. *hari*. ^(GIŠ)GISKIM/GIŠKIM/ISKIM – ասորեստ. *tukultu(m)* «օգնություն», «աջակցություն» (Հին ընթերցումը՝ ^(GIŠ)TUKUL), Հանդիպում է -li Հնչյունական լրացմամբ (ուրարտերեն լեզվի հոգնակի թվի ցուցիչը՝ Հմմտ. ^(LI)TUKUL-li – «զենք» խեթական տեքստերի, որոնցում -li Հնչյունական լրացումը Հանդիսանում է առայժմ չվկայված խեթական վերջավորությունը «զենք» բառի Հմմտը). HUL – ասորեստ. *hadutu* «ուրախություն», «բավականություն», ուրարտ. *pišuše*. ^(LU)IGI.LA – ասորեստ. *amaru* «վերակացու». IL.ILA – ասորեստ. *našu* «տանել», «Հետք տանել», ուրարտ. *nah(u)*, IM նույնն է, ինչ DUB-ը – ասորեստ. *tuppu* «արձանագրություն». MUNUS/SAL – ասորեստ. *sinništu* «կին», ուրարտ. ^(SAL)lutu և ^(LU/SAL)uediani. SIG₅ – ասորեստ. *damaqu* «լավ» ուրարտ. *gazuli(e)*. UTUL – ասորեստ. *dīqāru* «ծաղկաման», ուրարտ. *šani* «աման», «կաթսա» և չատ ուրիշներ:

Ինչ վերաբերում է ակկադոգրամներին, ապա դրանք Դիվանում տրված են առանձին, որպես ակկադերեն բառեր (YKH-ում դրանք զետեղված են շումերոգրամների հետ միասին). *annū(m)* «այս», ուրարտ. *ikukahini*. *dananu* «ուժ», ուրարտ. *tara(gi)e* կամ *ardiše*. *elenu(m)* «վրայից», «վերև», ուրարտ. *zainuadi*. *eqūtu* «զոհաբերություն», ուրարտ. *atqanani*. *hepū* «ջարդել», ուրարտ. *iph(u)* և *tur(u)*. *kenu(m)* «ճշմարիտ», ուրարտ. *musi*. *kullatu(m)* «բոլորը», ուրարտ. *šuiini*. *le'u* «Հարկադրել», ուրարտ. *'ald(u)*. *madu(m)* «չատ», ուրարտ. *tarae*. *memeni* «որևէ մեկը», ուրարտ. *aini*. *nabalu* «ավերել», ուրարտ. *pit(u)*. *parraku* «սրբատեղի», ուրարտ. *iarani*. *pašru* «ազատ», «ազատագրված» (պարտագիր զոհաբերությունից), ուրարտ. *eguruḥu/e*. *pīlu*, *pūlu*, *pelu* «ժառանգելորդ», ուրարտ. ^(NA)pulusi. *saknate* «հրված», «տեղադրված», ուրարտ. *tarainili*. *šulmu(m)* «առողջություն», «խաղաղություն», ուրարտ. *harari*. *туру* «դարձյալ», ուրարտ. *adani* և այլն:

Բացի այդ, Գ. Ա. Մելիքիչիլու և Ֆ. Վ. Քյոնիգի Հայտնի աշխատություններից հե-

տո ուրարտերենի բառապաշարը զգալի չափով Հարստացել է նոր տեքստերի Հրատարակությունների շնորհիվ (էջ 431-476): Արձանագրություններում առաջին անգամ բացահայտվել է նախկինում անհայտ բառերի մի ամբողջ շարք. *absi(ei)/apsi(ei)* «ամեն ոք», «ցանկացած». ^(E)adunusini «տունը». *amudi* «դաշտ», «վարելահող». *arḥe/i* «ուղի». *arniusinili* «սխրագործություններ», ^(LU)ateini «Հայր», խուրր. *attai*. ^(LU)aeuteeni «տաճարի ծառայող». *qurbini* «կապարճ». ^(LU)halbi = ^(LU)DUMU «որդի». *haluli* «խաղող». *harnizini* «արոտավայր». *inuani* «դիցուհիներ». *imutuhie* «թագավորություն». *kaquli* «քար». ^(LU)kirini «գավաթակիր». ^(LU)mari «տոհմիկ», «ազնվական» (Հմմտ. խուրր. *marri*, խեթ. *marijanni* «կառապան»). -me – կցական դերանուն «իմ», «ինձ». *meripte'* *mer(u)* բայից – «Հաշիվ», *namari* – ըստ երևույթին «քարակոթող» (արձանագրություն), «Հոշարձան», ^(LU)palagi – մասնագիտության անվանում. *pal(ia)* «ասել», *panithe* «անմշակ». *parult(u)* «քշել», «տանել». *qaitani* = ^(LU)UKU «ժողովուրդ». *quturili* – ստրուկների խավ. ^(LU)siardiali «սուրհանդակ». *tanasi* «ճրագ». ^(E)tuluria «պալատ» = *E.GAL* ^(MEŠ)-ria. ^(URUDU)dudie «սահմանաքար». *ešimesi* «Հավիտյան». *guni* «ճիշտ», «իսկապես». ^(UZU)ḥušu «միս». *ḥuṭuṭuḥi* «Հաջողություն». *inaini* «աստված». *inuani* «դիցուհի». *inerihini* «աստվածային». *iniriase* «աստվածություն». *kurni* «քուրմ». *puruli(ni)* «տուն», «տաճար» (խուրր. *puruli* և խեթ. *EZEN* *puruliaš* «տուն»), *qudulani* = *E.BAR* «տաճար». *niqali* «այծ». *sali* = *UDU*. *MAŠ*. *TUR* «ուլ». *siersini* «արոտավայր». ^(UZU)tisni/u «սիրտ» = *ŠA*. ^(LU)udiguni «կառավարիչ» և այլն:

Ուրարտական արձանագրություններում վկայված են նաև առայժմ անհայտ նշանակությամբ բառեր. *abduiani*, *adinni*, *adira*, *akaie*, *akasiyani*, *aluini*, *amue*, *amagi(e)*, *arpau(e)*, *aršudi*, *ateri*, *akudie*, *ekuse*, *erasini*, *gud(u)*, *irbilani*, *išeiame*, *isiasie*, *kumemuse*, *mauini*, *quradiri*, *sid(u)*, *silitili*, *sudumeni*, *suli*, *supa*, *talusuni*, *uani*, *usuini*, *ušulmu*, *zabzi*, *zamani* և այլն:

Գ. Ա. Մելիքիչիլու և Ֆ. Վ. Քյոնիգի ուրարտական դիվանների Հրատարակությո-

յունից հետո նորագյուտ տեքստերում վկայված են նոր անձնանուններ ու գիցանուններ (էջ 477-492). ^mAbiliukunu (?), ^mAka'a, ^dAliauni, ^mAluani, ^dAnique, ^dBaba, ^mBatišadini, ^mInuššila, ^mkurgi, ^mLubšusini, ^mMesa (Qulḥa երկրի արքայի անունը), ^mMuida, ^mPanuluanu (?), ^mKutubili, ^mSiluni, ^mTata, ^mUbiabi, ^mZazinu:

Աշխարհագրական և էթնիկական անվանումները (էջ 493-590), որոնք ի հայտ են եկել Գ. Ա. Մելիքիշվիլու և Ֆ. Վ. Քյոնիգի վերհիշյալ աշխատությունների տպագրությունից հետո, տարածված են Ուրարտուի, ինչպես նաև հարևան երկրների լայնածավալ տերիտորիայի վրա: Դրանցից են. Aelia, Aisuabzuni, Alniunu, Amuša, Ardu-ni, Arsuniuni, Buinialhi, Bulauhi, Erebuni, Erima, Gidimaruni, Huradinakuni, Husisili, Qudunili, Qutume, Tarzua'nani, Urkiani, Arḥu, Arteni, Buqu, Buzunia, Giarniani, Girduni, Igarab-ḥubi, Iqisa, Quriaka, Šapagili, Šuluqu, Taplani, Tarparaka, Tuišduni, Uldinie (նախկին կասկածելի ընթերցումը՝ Didinie ?), ^{KUR}URI/TILLA, Airi, Buduani, Eiduru, Mal-malie, Nagilani, Gugunaini, Dainali-tini երկրները, քաղաքները, լեռները և գետերը:

Նոր Դիվանի հավելվածում (էջ 531-533) ներկայացված են թուրք հեղինակների կողմից հրատարակված մի քանի համառոտ արձանագրություններ, որոնք փորագրված են շինաքարի, բրոնզե վահանի, կապարճի, օղակների վրա և որոնց կազմողները հանգիստնում են Իշպուլինի և Արգիշտի II-ը: Դրանց մեջ առկա է նաև անհայտ պատկանելության մի պակասավոր արձանագրության բեկոր, որի վրա, վերջավորություններում մասամբ եղծված վիճակում, պահպանվել են ուրարտագիտությանը տակավին անհայտ բառապաշարի նմուշներ. suruqu[...], ^{NA4}adanusa[...], pisa[...], qut-uḥu[...]:

Գիրքը եզրափակում են արձանագրությունների լուսանկարչական վերարտադրումները և ձեռագիր ընթերցանումները (I - CLXXIII), աղյուսակների և հապավումների ցանկերը, Ուրարտուի սխեմատիկ քարտեզը:

Մեր կողմից գրախոսվող աշխատությունը վկայում է, որ լույս է տեսել բացա-

ռիկ կարևոր մի հրատարակություն, որը հարկավոր է դիտարկել որպես ուրարտագիտության զարգացման նոր փուլ: Ստեղծվել են նոր հեռանկարներ ուրարտական սեպագիր արձանագրությունների հետագա ուսումնասիրության, ուրարտագիտության նոր ակտուալ հիմնահարցերի մշակման համար: Դիվանը, անկասկած, վիթխարի հետաքրքրություն է ներկայացնում հին արևելագիտությանը դրադվող մասնագետների, մասնավորապես լեզվաբանների, բանասերների, պատմաբանների համար:

Դատելով Գ. Ա. Մելիքիշվիլու և Ֆ. Վ. Քյոնիգի ուրարտագիտական հայտնի աշխատություններից հետո հրատարակված տեքստերից, պալեոգրաֆիական տեսակետից դրանք բոլորն էլ արտակարգ մոտ են նախկինում հրատարակված ուրարտական արձանագրություններին: Ինչպես պարզվում է, ուրարտական սեպագրին, ասորեստանյանի նման, բնորոշ է նշանների բազմաձայնությունը, իսկ գաղափարազիր մատուցումները (չումերական և ակկադական սեպագրերի) ուրարտական գրում գործածվում են նույնքան հաճախ, որքան և այլ սեպագրերում (Ի. Մ. Դյակոնով): Նոր տեքստերի հայտնաբերմանը զուգընթաց հայտնի է դառնում, որ ուրարտական փաստաթղթերում ևս (ի տարբերություն արձանագրությունների) հինարևելյան այլ (հատկապես խեթական) սեպագրերի նման, գործածական են բառանջատիչ նշաններ՝ այլ լեզվից փոխառնված բառերից առաջ: Ուշադրության արժանի է նաև գաղափարագրերի սխեմայի գործածությունն ուրարտական գրում տեքստերում գաղափարազրերը կոմբինացվում են դետերմինատիվների հետ, հանդիպում են բաղկացուցիչ գաղափարագրեր, որոնք անհայտ են չումերական և ակկադական սեպագրերին:

Ենթադրվել է, թե ուրարտական գրավոր պրակտիկան իբր վկայում է գրավոր սովորույթի անընդմեջ առկայության մասին՝ սկսած Միտաննիից և ինքնից մինչև Ուրարտու: Այդ ենթադրությունը, սակայն, մեծ համոզիչ չի թվում, քանի որ Ուրարտուում բացառվում էր անմիջական վերընթաց դրավոր սովորույթի առկայությունը դեպի Միտաննի և ինքնական թագավորութ-

յուն մ. թ. ա. XVI-XIII դարերում: Դա անկասկած է արդեն այն պատճառով, որ ուրարտական պետությունը գոյություն է ունեցել մինչև մ. թ. ա. IX դարը: Ավելի ճշմարտանման է թվում մեզ Գ. Ա. Մելիքիշվիլու և Ն. Վ. Հարությունյանի ենթադրությունը, որի համաձայն ուրարտական գրի ծագումը վերաբերում է մ.թ.ա. IX դարի վերջին քառորդին (УКН, էջ 93) կամ իշպուրիի, Սարգուրիի որդու, ժամանակին (УКН, էջ 9):

Որոշ գիտնականների կարծիքով, մի շարք բանաձևեր ուրարտական թագավորների տարեգրություններում իբր փոխառություն են ոչ թե ասորեստանյան, այլ խեթական տարեգրություններից: Սակայն մեզ ավելի ճշմարտացի է թվում այն, որ ուրարտական տարեգրությունները և արձանագրությունները ավելի շուտ բացահայտում են նմանություններ հենց ասորեստանյան, բայց ոչ խեթական, գրավոր հուշարձանների հետ, քանի որ տվյալ դեպքում բացառվում է ուղղակի կապը խեթերի և ուրարտացիների միջև: Զգալի չափով ավելի ուշ ստեղծված ուրարտական գիրը, անկասկած, ծագում է սեպագրի ասորեստանյան տարբերակից, այն դեպքում, երբ խեթական և խուրրիական գրերը ծագում

են մ. թ. ա. II հազարամյակի սկզբի հին ակադագերեն գրավոր սովորույթից:

Գ. Ա. Մելիքիշվիլու և Ֆ. Վ. Քյոնիգի ուրարտական արձանագրությունների հրատարակությունից հետո լույս ընծայված ուրարտական տեքստերից կարելի է քաղել նաև որոշ պատմական տվյալներ, որոնք առանձնահատուկ նշանակություն ունեն ուրարտական արքայական տնտեսության, հարկերի և պարհակների կազմակերպման, ամենօրյա հասարակական կյանքի, ուրարտական վերջին թագավորների հաջորդականության և ժամանակագրության մասին: Ի դեպ, թեև ուրարտական բառերի մեծ մասը վերաբերում է ռազմական, շինարարական և կրոնական (մասնավորապես պաշտամունքային) բառապաշարին, այնուամենայնիվ հանգես են եկել նաև նոր տվյալներ Ուրարտուի պատմական աշխարհագրություն և այլ հարցերի ճշգրտման և հետազոտման սիրություն համար:

Եզրակացման մեջ կարելի է ասել, որ Ն. Վ. Հարությունյանի գրախոսվող աշխատության լույս ընծայումը մեծ իրադարձություն է համաշխարհային ուրարտագիտության մեջ, որի նշանակությունը դժվար է գերադնահատել:

Թ. Վ. ԳԱՄՂԻՆԼԻՁԵ

Ռուսաստանի ԳԱ և Վրաստանի ԳԱ ակադեմիկոս

Գ. Գ. ԳԻՈՐԳԱՁԵ

Վրաստանի ԳԱ ակադեմիկոս

"Вестник древней истории", 2003, № 2 (245), стр. 211-215: